ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 19/09/12

ք.Երևան 10-ի սեպտեմբերի 2019թ.

«Ֆոտոլուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Իրավատեր), ի դեմս տնօրեն Մ.Բաղդասարյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Օգտագործող), ի դեմս գործադիր տնօրեն՝ Մ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Սույն Պայմանագրով Իրավատերը թույլատրում է Օգտագործողին օգտագործել Իրավատիրոջ մտավոր սեփականության օբյեկտները, մասնավորապես. Հայաստանի Հանրապետությունում տեղ գտնող իրադարձությունների, միջոցառումների, պաշտոնական այցերի ընթացքում Իրավատիրոջ կողմից արված լուսանկարները (այսուհետ՝ Լուսանկարներ), իսկ Օգտագործողը պարտավորվում է վճարել տրամադրված թույլտվության դիմաց սույն Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում: Սույն Պայմանագրով Իրավատերը Օգտագործողին տրամադրում է Լուսանկարների օգտագործման հասարակ, ոչ բացառիկ թույլտվություն (այսուհետ՝ Թույլտվություն):

1.2. Սույն Պայմանագրով տրամադրված Թույլտվության շրջանակներում Օգտագործողին թույլատրվում է Լուսանկարները հրապարակել Օգտագործողի պաշտոնական ինտերնետային կայքէջերում, ինչպես նաև սոցիալական ցանցերում ունեցած պաշտոնական էջերում:

1.3. Սույն Պայմանագրով տրամադրված Թույլտվությունը գործում է ամբողջ աշխարհի տարածքում:

1.4. Սույն Պայմանագրով տրամադրված Լուսանկարների Թույլտվությունը գործում է անժամկետ:

1.5. Օգտագործողն իրավունք ունի ցանկացած ձևով վերամշակել Լուսանկարները (բլուրել, կտրել, գունազրկել և այլ)՝ պահպանելով Իրավատիրոջ առևտրային նշանը (տարբերիչ նիշք, տարբերանշան):

1.6. Իրավատերը Լուսանկարները Օգտագործողին է տրամադրում սույն Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեներով ուղարկելու եղանակով:

1.7. Իրավատերը երաշխավորում է, որ հանդիսանում է Լուսանկարների իրավատերը և իրավասու է ստորագրելու սույն Պայմանագիրը, ինչպես նաև ունի սույն Պայմանագրով Թույլտվության տրամադրման համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները: Լուսանկարներում Իրավատիրոջ կողմից օգտագործված հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման իրավաչափության համար պատասխանատվությունը կրում է Իրավատերը:

1.8. Բոլոր այն իրավունքները, թույլտվությունները և հնարավորությունները, որոնք ուղղակիորեն չեն փոխանցվել Օգտագործողին սույն Պայմանագրով, համարվում են չփոխանցված և չեն հանդիսանում սույն Պայմանագրի առարկա:

1.9. Սույն Պայմանագրի շրջանակներում Իրավատերն Օգտագործողին Լուսանկարներ կփոխանցի մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Իրավատերն իրավունք ունի՝

2.1.1. Օգտագործողից պահանջել Լուսանկարները օգտագործել սույն Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններով,

2.1.2. Օգտագործողից պահանջել վերացնելու Լուսանկարների օգտագործման ընթացքում թույլ տրված ցանկացած խախտում,

2.1.3. Օգտագործողից պահանջել Թույլտվությունը չփոխանցել այլ անձանց՝ առանց Իրավատիրոջ գրավոր համաձայնության,

2.1.4. Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու մասին Օգտագործողին տեղեկացնելուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում առկա խախտումները չվերացնելու դեպքում վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:

2.2. Իրավատերը պարտավոր է՝

2.2.1. Լուսանկարները տրամադրել Օգտագործողին սույն Պայմանագրով սահմանված կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ժամկետում, 2000px ձևաչափով,

2.2.2. Չխոչընդոտել Օգտագործողի կողմից Լուսանկարների՝ սույն Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններով օգտագործմանը:

2.3. Օգտագործողն իրավունք ունի՝

2.3.1. Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու մասին Իրավատիրոջը տեղեկացնելուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում առկա խախտումները չվերացնելու դեպքում՝ վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:

2.4. Օգտագործողը պարտավոր է՝

2.4.1. Վճարել Թույլտվության դիմած սույն Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրի համաձայն մեկ ամսվա ընթացքում տրամադրված Լուսանկարների դիմաց վճարվելիք վարձատրության չափը, անկախ հանձնված Լուսանկարների քանակից, կազմում է 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը:

3.2. Օգտագործողը սույն Պայմանագրի 3.1 կետում նշված արժեքի վճարումն իրականացնում է ամսական հիմքով՝ հանձնման ընդունման ակտերի և հաշիվ-ապրանքագրերի երկկողմանի հաստատումից 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Սույն Պայմանագրով վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Իրավատիրոջ բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Վճարման ամսաթիվ է համարվում Օգտագործողի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

3.5. Բանկային ծախսերը Օգտագործողի բանկում կատարում է Օգտագործողը, իսկ Իրավատիրոջ բանկում՝ Իրավատերը:

4. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Իրավատերը Լուսանկարները տրամադրում է Օգտագործողի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելուց երկու ժամվա ընթացքում, եթե Կողմերի միջև բանավոր կամ գրավոր կերպով ավելի կարճ ժամկետ չի համաձայնեցվում:

4.2. Յուրաքանչյուր օրացուցային ամսվա ավարտից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Իրավատերն Օգտագործողին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը:

4.3. Հանձնման-ընդունման ակտն Իրավատիրոջ ներկայացնելուց 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Օգտագործողն Իրավատիրոջ աջակցությամբ ստուգում է հանձնված Լուսանկարների քանակը, նկարագրերը և առարկությունների բացակայության դեպքում հաստատում է հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-ապրանքագիրը:

4.4. Այն դեպքում, երբ սույն Պայմանագրի 4.3 կետով սահմանված ստուգման ընթացքում հայտնաբերվում են սույն Պայմանագրի շրջանակներում Իրավատիրոջ ստանձնած պարտավորություններից թերություններ և/կամ շեղումներ, Օգտագործողը պարտավորվում է նույն կետով սահմանված ժամկետում Իրավատիրոջ գրավոր ներկայացնել հանձնման-ընդունման ակտի չհաստատման հիմնավորում՝ նշելով հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները:

4.5. Այն դեպքում, եթե Օգտագործողը սույն Պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Իրավատիրոջը չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Իրավատիրոջ ներկայացնելու ամսաթվով:

4.6. Եթե որևէ օրացուցային ամսվա ընթացքում Լուսանկարներ չեն տրամադրվում, տվյալ ամսվա համար հանձնման-ընդունման ակտ և հաշիվ-ապրանքագիր չի ներկայացվում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Օգտագործողին երրորդ անձանց կողմից ներկայացված ցանկացած պահանջի, վեճի, հայցի դեպքում, որոնք Իրավատիրոջ կողմից սույն Պայմանագրի պահանջների, երաշխիքների խախտման արդյունք են, Իրավատերը հատուցում է նման պահանջի, վեճի կամ հայցի արդյունքում Օգտագործողի կրած բոլոր վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

5.3. Լուսանկարների տրամադրման համար սույն Պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում Օգտագործողն իրավունք ունի Իրավատիրոջից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր ժամվա (օրվա) համար սույն Պայմանագրով Թույլտվության դիմաց ամսական հիմքով վճարման ենթակա վարձատրության 2 (երկու) տոկոսի չափով:

5.4. Սույն Պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել Իրավատիրոջը վճարման ենթակա գումարներից:

5.5. Օգտագործողի կողմից Թույլտվության դիմաց վճարելու սույն Պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու դեպքում Իրավատերն իրավունք ունի Օգտագործողից գանձելու տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Թույլտվության դիմաց ամսական հիմքով վճարման ենթակա վարձատրության 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.6. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուժանքների վճարումը չի ազատում Կողմերին սույն Պայմանագրով ստանձնած պարտականությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ գանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրվեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում՝ մինչև Կողմերի համար դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

8.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

8.3. Կողմի՝ Պայմանագրից ծագած վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.4. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.5. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.6. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.7. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

8.8. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել սույն Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.9. Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.10. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.11. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրավատեր	Օգտագործող
«Ֆոտոլուր» ՍՊԸ	**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 3ա	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 02560325	ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470139206960000	Հ/Հ՝ 2470102796740000
Էլ.փոստ՝ photolur@gmail.com	Էլ.փոստ՝ 1news@1tv.am
	arajin.aliq4@gmail.com
	zara.israelyan@gmail.com
Մ.Բաղդասարյան	**Մ.Գրիգորյան**
Տնօրեն	*Գործադիր տնօրեն*

Պայմանագիր N 19/09/12

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2019թ. սեպտեմբերի 10-ին կնքված N 19/09/12 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք.Երևան 25-ը դեկտեմբերի 2019թ.

«Ֆոտոլուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Մ.Բաղդասարյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Մ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից և

(այսուհետ, յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերի միջև 2019թ. սեպտեմբերի 10-ին կնքված N 19/09/12 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.9. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «1.9. Սույն Պայմանագրի շրջանակներում Իրավատերն Օգտագործողին Լուսանկարներ կփոխանցի մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:
2. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Ֆոտոլուր» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 3ա

ՀՎՀՀ՝ 02560325
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470139206960000
Էլ.փոստ՝ photolur@gmail.com

Մ.Բաղդասարյան
Տնօրեն

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000
Էլ.փոստ՝ 1news@1tv.am
arajin.aliq4@gmail.com
zara.israelyan@gmail.com

Մ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն